ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի <<Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում>> ԺԲ.00.02 <<Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)>> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի <<Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում>> վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վարչարարության ինստիտուտի առանցքային սկզբունքներից մեկին՝ վարչարարության համաչափությանը, որի էության բացահայտումը, դրանում ներդրված իմաստը, կիրառման պայմանները, սահմանները չափազանց արդիական են և ունեն գիտագործնական հետազոտության մեծ պահանջարկ: Հիմնավոր են հեղինակի՝ թեմայի արդիականությանը և խնդրո առարկա հարցադրումների հրատապությանը վերաբերող փաստարկները:

Ներկայումս ՀՀ իրավական համակարգում /հատկապես գործնական հարթությունում/ առկա են լուրջ խնդիրներ վերոնշյալ հարցերի լուծման կապակցությամբ:

Նշված հարցադրումների՝ խորը տեսական վերլուծության վրա հիմնված ամբողջական և համակարգային պատասխանները կօգնեն լուծելու իրավակիրառական պրակտիկայի առաջ ծառացած վերոնշյալ խնդիրները, ինչը նախևառաջ հնարավոր է առարկայացնել գիտատեսական աշխատություններով:

Հեղինակին հաջողվել է համալիր և ամբողջական վերլուծության ենթարկել ուսումնասիրության առարկա կազմող վարչարարության համաչափության սկզբունքի էությունը և դրանց առնչվող հարցերը, խնդրո առարկայի վերաբերյալ ներկայացնել ինքնուրույն, հիմնավորված դատողություններ, գիտականորեն հիմնավորված հետևություններ, որոնք կարող են իրավակիրառ պրակտիկայում մի շարք հարցերի լուծման ուղեգիծ հանդիսանալ:

Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումներն ունեն գիտագործնական զգալի նշանակություն և կարող են օգտակար լինել ինչպես առանձին հետազոտությունների, այնպես էլ հայրենական օրենսդրության բարեփոխման համար:

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք. այն կազմված է ներածությունից, բաղկացած երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության՝ **<<Վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանները եվ դերը վարչարարության սկզբունքների համակարգում>>** վերտառությամբ առաջին գլխում կատարված ուսումնասիրությունների շրջանակներում նորովի իմաստավորվել և արժևորվել են այնպիսի առանձին իրավական հասկացություններ և դրանցով անվանվող գոյեր, ինչպիսիք են վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանները: Հետազոտման առարկա հանդիսացող սկզբունքը համակարգային առումով ուսումնասիրվել է այլ սկզբունքների հետ միասին՝ ներկայացնելով այդ սկզբունքների հետ հարաբերակցությունը:

Հետազոտության **<<Վարչարարության համաչափության սկզբունքի տարրերը>>** վերտառությամբ երկրորդ գլխում հեղինակն անդրադարձել է վարչարարության համաչափության սկզբունքին՝ որպես ինքնաբավ իրավական գոյ, որի էությունը արտացոլվում է նրա տարրերի համակացությամբ: Առանձին-առանձին ուսումնասիրվել են վարչարարության համաչափության սկզբունքի տարրերը:

Հետազոտության **<<Վարչարարության համաչափության սկզբունքի իրացման էական առանձնահատկությունները արդի զարգացումների խորապատկերում>>** վերտառությամբ երրորդ գլխում հեղինակը վերլուծության է ենթարկել վարչարարության համաչափության սկզբունքը կառավարման հատուկ ռեժիմի, ուժի կիրառման պայմաններում, ինչպես նաև անդրադարձել է խնդրո առարկա ելակետային դրույթի կիրառման հիմնահարցերին վարչական բողոքարկման և դատական վերանայման իրավազոր գործընթացներում:

Որպես աշխատության ձեռքբերում կարելի է համարել այն իրողությունը, որ հեղինակը հետազոտության **<<Վարչարարության համաչափության սկզբունքի տարրերը>>** վերտառությամբ երկրորդ գլխում ներկայացրել է վարչարարության համաչափության սկզբունքի իրավական ձևակերպման նպատակով օրենսդրի կողմից կիրառված հասկացությունների /տարրերի/ էությունը՝ փորձելով վեր հանել դրանց ընկալման սահմանները (հայեցակարգային, կիրառական և օրենսդրական առումներով):

Արդյունքում գիտականորեն հիմնավորված (հայեցակարգային) եզրահանգումներով ներկայացվում են հայաստանյան իրականությունում վարչարարության համաչափության սկզբունքի որոշ հիմնահարցերի գործնական լուծումներ:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ատենախոսությունը՝ մեր կարծիքով, սակայն, ատենախոսության առնչությամբ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1) Մեր կարծիքով՝ վերապահումով պետք է ընդունել հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող երկրորդ, երրորդ դրույթները:

Հեղինակի կողմից պաշտպանության առաջադրվող երկրորդ դրույթը ունի հետևյալ բովանդակությունը. *<<Վարչարարության համաչափության սկզբունքը գտնվում է սերտ կապի և փոխհարաբերակցության մեջ վարչարարության մյուս, մասնավորապես՝ օրինականության, իրավական որոշակիության և օրինական ակնկալիքների պաշտպանության, կամայականության արգելքի, հայեցողական լիազորությունների սահմանափակման և տնտեսվարության սկզբունքների հետ:...>>:*

Երրորդ դրույթն ունի հետևյալ ձևակերպումը. *<<Վարչարարության համաչափության սկզբունքի՝ լեգիտիմ նպատակի փարրը պահանջում է, որ սահմանադրական իրավունքները սահմանափակելիս վարչական մարմինը հետապնդի օրենսդրական ակտերով նախատեսված միայն այնպիսի նպատակներ, որոնք բավականաչափ կարևոր են արդարացնելու այդ իրավունքների սահմանափակումը:...>>:*

Մեր կարծիքով՝ պաշտպանության ներկայացվող յուրաքանչյուր դրույթ իրենից ներկայացնում է որոշակի գիտական գիտելիքների և գիտական մեթոդաբանության հիման վրա կատարված այն ընդհանրական եզրահանգումը (գաղափարը), որը հեղինակը առաջ է քաշում գիտության կոնկրետ բնագավառում էական նշանակություն ունեցող խնդրի լուծման համար: Համաչափության սկզբունքի՝ այլ սկզբունքների հետ դիալեկտիկական կապը /այլ սկզբունքների հետ սերտ կապի և փոխհարաբերակցության մեջ լինելը/, ինչպես նաև վարչարարության համաչափության սկզբունքի՝ հետապնդած լեգիտիմ նպատակի նմանակերպ բնութագրումը[1] որպես պաշտպանության ներկայացվող գիտական դրույթ ներկայացնելը, մեր կարծիքով, այդքան էլ ընդունելի չէ:

2) Փորձելով բացահայտել վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանները և տարրերը՝ հեղինակը աշխատության 28-րդ, 49-րդ, 169-րդ էջերում նշված երևույթները ուսումնասիրելու ընթացքում անընդհատ շեշտադրում և կարևորում է այն իրողությունը, որ վարչարարության համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի տարրը պահանջում է, **որ սահմանադրական իրավունքները սահմանափակելիս վարչական մարմինը հետապնդի օրենսդրական ակտերով նախատեսված միայն այնպիսի նպատակներ, որոնք բավականաչափ կարևոր են արդարացնելու այդ իրավունքների սահմանափակումը:**

Մեր կարծիքով՝ վարչարարության համաչափության սկզբունքի հետապնդող լեգիտիմ նպատակի՝ միայն սահմանադրական իրավունքների սահմանափակման տեսանկյունից դիտարկելը և կարևորելը ամբողջությամբ չի բացահայտում այդ սկզբունքի՝ որպես վարչարարական հիմնարար դրույթի էությունը: Վարչարարության համաչափության սկզբունքի հետապնդած նպատակը հասկացական առումով ավելի ընդգրկուն է, իսկ սահմանադրական իրավունքների սահմանափակման համատեքստում դրա կարևորումը նշված բազմաշերտ երևույթի գործառութային դրսևորումներից մեկն է:

Հեղինակի առաջ քաշած մոտեցման շրջանակներում՝ վարչարարության համաչափության սկզբունքը կիրառելի կլինի միայն այն վարչական վարույթներում,

---

[1] Վարչարարության համաչափության սկզբունքի հետապնդած լեգիտիմ նպատակի՝ միայն սահմանադրական իրավունքների սահմանափակման չափանիշի լույսի ներքո ներկայացնելն ամբողջությամբ չի բացահայտնում վարչարարության համաչափության սկզբունքի էությունը:

որոնք եզրափակվում են միջամտող վարչական ակտերի ընդունմամբ, որոնցով հանրային իշխանության մարմինները /վարչական մարմինները/ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Մինչդեռ վարչարարության համաչափության սկզբունքը կիրառելի է վարչարարության բոլոր տեսակների, այդ թվում՝ բարենպաստ վարչական ակտերի ընդունմամբ եզրափակվող վարչական վարույթների նկատմամբ, որոնց պարագայում անձանց իրավունքների (այդ թվում՝ սահմանադրական) որևէ սահմանափակում առկա չէ:

Մեր կարծիքով՝ հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե հեղինակը ատենախոսությունում տարանջատեր վարչարարության համաչափության (<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 8-րդ հոդված) և սահմանադրաիրավական կարգավորման առարկա համաչափության (Սահմանադրության 78-րդ հոդված) սկզբունքները՝ փորձելով ձևական տրամաբանության կանոնների պահպանմամբ վեր հանել դրանցով յուրաքանչյուրով բնութագրվող իրավական երևույթները, դրանց հարաբերակցությունը, ինչպես նաև նշված նորմ-սկզբունքների կարգավորման առարկա կազմող իրավահարաբերությունները:

3) Հեղինակի կարծիքով՝ ժողովրդավարական բազմաթիվ արժեքների մեջ ամենաբնորոշ լեգիտիմ նպատակներն են՝ <u>սահմանադրական իրավունքները մի կողմից, և հանրային շահը՝ մյուս կողմից</u> (էջ 51-52): Հեղինակը գտնում է, որ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմնի կողմից մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակումն արդարացնող Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները կարող ենք խմբավորել երկու հիմքերով՝ հանրային շահ և այլոց իրավունքների պաշտպանություն: Ընդ որում, եթե այլոց իրավունքների պաշտպանությունը միշտ լեգիտիմ նպատակ է մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համար, ապա հանրային շահ համարվող ցանկացած արժեք չէ, որ կարող է արդարացնել վարչական մարմնի կողմից մարդու իրավունքների սահմանափակումը (էջ 54):

Մեր կարծիքով՝ վերապահումով պետք է ընդունել հեղինակի նման կատեգորիկ մոտեցումը և դրա հետագա հիմնավորումները:

Գիտամեթոդական տեսանկյունից Սահմանադրությամբ և օրենքով հետապնդվող նպատակները երկու հիմքերով (հանրային շահ և այլոց իրավունքների պաշտպանություն) խմբավորելուց առաջ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նշված երկու երևույթները և դրանց հարաբերակցությունը:

Մեր կարծիքով՝ հանրային շահը և այլոց սահմանադրական իրավունքների պաշտպանությունը միմյանց բացառող երևույթներ չեն. դրանք հարաբերակցվում են որպես ամբողջը և մասը: Մեր համոզմամբ՝ հանրային շահը որպես համընդհանուր, համամարդկային որոշակի բարիք /պահանջմունք/ իրենում ներառում է նաև անձի սահմանադրական իրավունքները /հատկապես դրա պաշտպանության կառուցակարգերը/: Անձի սահմանադրական իրավունքների որևէ կերպ անհարկի սահմանափակումը /դրանց չպաշտպանելը/, կարծում ենք, հանգեցնելու է հանրային շահի խախտմանը:

Այնուամենայնիվ՝ ներկայացված դիտողությունները հիմնականում կրում են բանավիճային բնույթ և չեն նվազեցնում հետազոտության գիտական արժեքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է փաստել, որ գրախոսվող ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսությունը պատրաստված և կազմված է ատենախոսության ձևավորման պահանջներին համապատասխան: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած 7 գիտական հոդվածներում /հրապարակումներում/, սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի **<<Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում>>** վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված <<ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ>>-ով ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական զգալի ընդունակություններ, կատարել է

բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է պատշաճ մակարդակով գրված, տեսական և գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք, որի համար կարող է արժանանալ ԺԲ.00.02-<<Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)>> մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական հայցվող աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

Գ. ՄՈՒՂՆԵՑՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

10 դեկտեմբերի 2022 թվական

Պաշտոնական ընդդիմախոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Գնել Մուղնեցյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

դեկանի տեղակալ Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

10 դեկտեմբերի 2022 թվական